

Pakron

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԱԹԵԱՆ

1 Ապրիլ - 31 Դեկտ.

1951

Սիրելի Անգամներ.

Կը փափայիմ այս առաջին տեղեկագրիս սկսի կարգալով այն նամակը զոր ասկէ աւրի մտառաջ ստացայ Ամերիկահայոց Առաջնորդ Փեր. Տ. Տիրան Եպիսկոպոսէն: Ահաւասիկ նամակը. -

Վի. Եորթ
Յունուար 24, 1951

Արժանաշ նոր
Տ. Արտէն ԲՆՆՅ. Աշճեան
Յգնական Հովիտ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Ատա

Սիրելի Տէր Արտէն.

Նկատի տանելով որ Ժնուարու սկիզբէն սկսեալ Փէթըրսընի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցիի Հովուական պաշտօնը Թափուր պիտի մնայ. եւ անհրաժեշտ է որ այդ մասին տնօրինութիւն կատարենք. Այսպէս զՁեզ կը նշանակենք, Փէթըրսընի մեր ծուխին Հոգաբարձութեան Հետ խորհրդակցելէ ետք, Ժնուար Հովիտ նոյն եկեղեցւոյն յառաջիկայ Ապրիլ ամսու սկիզբէն սկսեալ: Վաստէ ըլլալով որ Ձեր նոր պաշտօնին մէջ պիտի ցուցնէք ժրջան եւ նպաստել գործունէութիւն, ի բարգաւաճումն Փէթըրսընի մեր եկեղեցւոյն եւ ծախին Հոգեւոր եւ կազմակերպական բարեկարգութեան.

Մնա՛ք
Հայրական սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ
աղօթեալսից

Տիրան Եպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Առաջնորդ Սրբազան Հօր այս հրահանգին հնազանդելով, Աւագ Գործարարի օր, Մարտ 28-ին, մեր գոյրերով Փոխադրուեցանք Փէթըրսըն, եկեղեցւոյն կողմէ ն. բ ծախու աղնուած տունը, եւ Աւագ Ետնուան կրօնական արարողութեանց Հասանումն ըլլալով մէկտեղ, Հարկադրուեցանք զբաղել միասնական բնակարանի տեղատարան տարկադրական գործերով: Կ, ուղեմ Հայ ԻՄ եւ երեկոյն ինչ կողմէ շնորհակալութիւն յայտնել հասեալ ներուսն, որոնք մեր փոխադրութեան եւ Հովուաւանի որոշ կահ կարասներու եւ ամսականներու հայնայնութեան օգնե.

ցին. - Հէրի Եպիսկոպոս Երանանի, Տրիպոլիսի Առաջնորդ, Եկեղեցաւոր
Տրիպոլիսի Առաջնորդ, Երանանի, Երանանի, Արարիկ Թիւրքան,
Զատէն Մարտիան, եւ Արարիկ Մարտիան:

Փէթրոսընի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցին եւ Համայնքը նախապէս
հանչումով պատեհութիւն չէի ունեցած, եթէ Հաշտենք այն երկու առիթները
երբ Եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցած եմ ուստեղութեան շրջանին, ապէ
երբ չորս ասորի առաջ: Այնպէս որ կրնամ ըսել թաղարկին նոր Համայնք մը
էր ինչ յանձնուածը այստեղ: Բնական է նորիցէ մը Համար կարեւոր խնդիր է
թէ ինչքն պիտի գտնէ իր նոր պարտականութիւն մէջ, ըլլալ իր պատեհութիւն,
ըլլալ իր թերութիւն: Արդ, Փէթրոսընի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցին գոյ
կարգ մը առաւելութիւններով օժտուած: Եւ, Եկեղեցին ունի որչա՞նչ միայն շէնք,
գեղեցիկ խորանով ու բաւարար սրահով մէկտեղ, Հայաստան կրնա ըսել
բաց արտաքինութիւն մը, որ կարելիութիւն կուտայ ապագային յարակից մասեր ա-
ւելցնելու կամ Եկեղեցին ընդարձակելու: Երկրորդ, Եկեղեցին իր Հովիւի
ընկերութեան կարեւոր հարցը լուծած էր ընկերութեան մը գոյնով: Այս անսակե-
տին, Փէթրոսընի Համայնքը կը միանայ մեր Առաջնորդական թեմի մյն եթէ ծա-
խերուն, որոնք Եկեղեցի ունենալէ զառ Հովուառուի ալ ունին: Երրորդ, Եկե-
ղեցին գերո էր սեպէ զբանական պարտքէ: Այս վերջապէս գոյս երկուստեք խոս-
տովնակից զարաց գոյ մը, Հաւատարմ ու սարկելու պատրաստականութիւն ունե-
ցող:

Իսկ թէ ինչ թերութիւններ գոյ, զանոնք պիտի շիշեմ առաւ-
ելին, այլ գործ ունէ՞նք: Երանանի զանազան բաժինները թուած ժամանակս պիտի ակնար-
կեմ անոնց:

Ինչպէս կ'երեւի Առաջնորդ Սրբոցան Հօր նախակէն, Փէթրոսընի
մէջ իմ Հովուական պարտականութիւնս էր շնայ Եկեղեցւոյն բարգաւաճման Հա-
մար, ինչպէս նաեւ բարեկարգ պահել ծովը, Հոգեւոր եւ կազմակերպական տես-
կէտն:

Նախ, Հոգեւոր բարեկերպութիւնը: Ս. Զատիկէն ի վեր, Եկեղեց-
ւոյ մէջ Կիրակնօրնայ պաշտօնները գոյն կատարուած է ամէն Կիրակի, Ս. Պատար-
ագի մատուցմամբ եւ բարոյստութեամբ: Բացառութիւն եղան չորս Կիրակիներ. -
1. Ծուլիսի առաջին Կիրակին, երբ ամառային արձակուրդով բացակայ եղայ, եւ
իմ աղօթքս ըրի մի այլ նահանգի Հայ Եկեղեցիներէն մէկուն մէջ: 2. Մեկամբրե-
րի առաջին Կիրակին, երբ Հոգեւորութեան Հաւանութեամբ իր պատգամաւորներ
կայ եղայ Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան տարեկան Համագումարին:
3. Հակամբրերի առաջին Կիրակին, երբ Առաջնորդական թեմի տարեկան Երեսփոխ-
ական ժողովին կը մասնակցէի Ռեստըր, ու վերջապէս անցեալ Կիրակի, Ծուլուար
13, երբ հիւանդութիւնս ու բժիշկի հրահանգը հարկադրեց ինչ տառեր մնալ:

Գէտը է ըսեմ որ մեր ծխականներուն ճշգրտահարութիւնը եւ Կիրա-
կի առաւելներ Ս. Պատարագի մասնակցելու փութեամբութիւնը Հեռու է գովելի ըլ-
լալէ: Միթէրական է սակայն Դպրաց դասին ճշգրտահարութիւնը եւ Հեռաքարտութիւնը:
Ես անգամ միշտեւ Ս. Պատարագի արարողութեան կէտը աւելի երգիչներ ունին
դասին մէջ, քան թէ աղօթող ժողովուրդ, նախառններուն մէջ: Այս պարագան զիս
մղած է վերջին երկու ամիսներէն ի վեր ճշտա Գիրքը փութեամբ Հայերէնի անգլե-
ն կարգով ալ, գէթ ի նպատակ եւ ի գոտեարականութիւն զարաց գոտա անգամներուն,
որոնք գրեթէ միշտ այդ պահուն իրենց թիւով կը գերազանցեն աղօթող ժողովուրդը:

Դպրաց դասու մանչերէն Հինգը անցնող զարնամակերշին ու
անրան մարդու ըլլով, որոշ պատարագութեանց Համար, ներկայիս իր բարեկարգ կը
կազարեն սարկաւորի յատուկ պաշտօններ, եւ այդպէսով լուծած են Ս. Խորանի
սպասարկուներու հարցը, որ վշտ կերպով ներկայացաւ ինչ, Հոս ժամանակ առա-
ջին շաբաթու Իսկ: Ուրախ գէտը է ըլլանք ամէնքս ալ ի տես մեր երիտասարդնե-
րու համերաշխ գործակցութեան եւ իրենց պայքերու Եկեղեցւոյն օգտին ու երգե-
ցողութիւնները սարկելու փութեամբ: Այս առիթի շնորհակալութեան պարտք ունիմ
Հոգ. Տ. Թորոս վրդ. Մանուկեանին, որ բարի եղաւ իր իսկ յօրնած սարկաւ-
որ երգեցողութիւնը բազմազան լալով մեզի զրկելու, եւ երէցկան, որ այս
ուրարակիրներէն երկուքին երգեցողութեան փութեամբ վարեց օրերն զրայ, ասո-
նեակ մը շարքներ:

Հաւատացեալ Գրիտոնեաներու հոգեւոր կեանքին մէջ էական նշանակութիւն ունի Ս. Հաղորդութեան բաժակին մօտեցալն ու այդ փրկարար սրբութիւնը պատշաճօրէն ստանալը: Ս. Պատարագը կը մատուցուի քրիստոսի մասնակցող ներկայ Հաւատացեալները Ս. Հաղորդութիւն ստանան: Գէթ այդ էր Ս. Պատարագին նպատակը, սկզբնական դարերու: Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ ծախք այս տեսակէտէն անտարբեր է, քացառութեամբը մի քանի անհատներու: Եկեղեցին չունի կանոն մը որ արտօնէ դրամով կամ գործով եկեղեցւոյ տուրք եւ նպաստ բերողներուն, հետո՛ւ մնալ Ս. Հաղորդութեան ստանալու իրենց պարտականութենէն: Ս. Հաղորդութիւն ստանալը ամէն Հաւատացեալ Հայ քրիստոնէի ոչ միայն պարտականութիւնն է, հապա նաեւ իրաւունքը: Այս իրաւունքը, յիշեցնեմ ձեզ սիրեկի անդամներ, մեզի տրուած է իւրաքանչիւրիս մկրտուած օրը: Շատեր թերեւս կ'ամշնան իրենց այս իրաւունքը գործադրելու: Յակայն թող նային անոնք մեր ազգի պատմութեան մեծագոյն սուրբին եւ հերոսին, Թաշն Վարդան Մամիկոնեան զօրավարին, որ ոչ թէ միայն դրամ, հապա նաեւ իր արիւնք տալու պատրաստ էր իր հաւատքին համար. ան իր նախարարներով մէկտեղ շամշցաւ Աւարայրի ճակատամարտին նախըմթաց գիշերը Հաղորդութիւն Ս. Բաժակէն: Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ գալով, այս տարի Ս. Հաղորդութիւն ստացած են, խոստովանելէ ետք, Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներն եւ Եւսեպիշները, երեք անգամ, ու դպրոց դասի անդամները, մէկ անգամ:

Ս. Հաղորդութիւն տարած եմ հիւանդներու եւ մահաճերձներու, քաղաքիս Սէնթ ձագէն, Պարնըրտ, ու Վէլիփու հիւանդանոցները զստուող հայերու, ամէն անգամ որ լուր տրուած է ինձ:

Եկեղեցւոյս մէջ կամ անոր անուամբ անցնող տարուան ընթացքին կատարուած են հետեւեալ ծիսակատարութիւնները. —

ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ եւ ԴՐՈՇՄ, ութ հատ, վեցը եկեղեցւոյս Ս. Աւագանին մէջ, երկուսը բնակարաններու մէջ, Ենկվուտ, Ն.Ճ. եւ Եւթիկա, Ն.Ե.:

ԴՐՈՇՄ միայն, մէկ հատ:

ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ, երեք հատ: Պսակուող երեք զոյգերէն երկուսը իրենց ամուսնութեան օրէն ի վեր մեր ծուխէն դուրս քաղաքներու մէջ հաստատած են իրենց բնակութիւնը:

ԹԱՂՈՒՄ, վեց հատ, որոնցմէ առաջինը եւ երկրորդը առանց արձեռնակութեան մարտիկներու եկեղեցի բերուելու:

Միսակատարութեանց այս համարատուութիւնը ընելէ վերջ, հարկ կը զգամ մի քանի թելադրութիւններ եւ դիտողութիւններ ընել տանց կապակցարար: Մկրտութեանց պարագային, նորածին փոքրիկները պէտք է մկրտուին քառասուն օր չանցած: Կնքահայր ըլլալիք անձը պէտք է անպայման Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցւոյ զաւակ եղող մէկը ըլլայ: Պսակադրութեանց պարագային, պսակուելիք զոյգերը պէտք է Ս. Հաղորդութիւն ստանան եկեղեցի գալով, պսակին առաւել կամ նախորդ Կիրակին: Թաղումները մեռելատունէն ազդակի գերեզմանատուն տանելով կատարելը, առանց եկեղեցւոյ շէնքի օրհնութեան, յարգանքի պակաս է հանգուցեալին հանգէլ: Ասկէ զատ, կարեւոր է կտակներու խնդիրը, ամենքս ալ մահկանացու ենք ու շենք գիտեր երբ եւ ինչ պարագաներու տակ պիտի հասնի մահը մեզի: Այս ի մտի պէտք է ունենան մանաւանդ տարիքոտ անձինք, եւ թէ Աստուած գիտենք ինչքերու տէր ըրած է, այսպիսիները պէտք է գիտակցին կտակ մը պատրաստելու կարեւորութեան: Ազգային կրօնական, կրթական եւ բարեսիրական հաստատութիւններ աւելի արժանի են այսպիսի կտակներու նպատողակալն ըլլալու, քան թէ պետութիւնը կամ օրէնքի մասնագէտները:

Մեր թեմի կանոնադրութեան 28րդ յօդուածը կը թուէ հոգարար ձեռնարկան պարտականութիւնները, որոնց կարգին — Թ. — են "Պահել կանոնաւոր արձանագրութիւն մկրտութեանց, պսակներու եւ մահերու: Նկատի ունենալով որ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցին 18 տարիներէ ի վեր զայնութիւն ունի — հոգարար ձեռնարկ մէկտեղ, այսպիսի արձանագրութեանց չգոյութիւնը, որ իմ փէթըրըն

Հասնել է սրի ժամանակ վերջ տուրգեցի ցառով, իսկապէս որ ամօթայի իրողութիւն մըն է: Ինչ ըստեցաւ, ի պատասխան իմ պրպտութեանս, թէ կաշին այդպիսի արձանագրութեանց տեսողներ: Գտածս եղաւ նախ տեսող մը, որուն հակառիւ գրուած էր ՏՈՄԱՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՑ, որուն մէջ սակայն ոչ մէկ բան չկար մկրտութեանց մասին: Ուրիշ Տոմար մը, թաղումներու համար, սկսուած էր 1938-ին, որ ընդհատուած էր ք տարի վերջ, 1941-ին: Չենք կրնաք եմբարել թէ 1941- 1951 տասնամեակին սեւէ մահ չպատահեցաւ այս համայնքին մէջ: Առաջին աթիւ անհրաժեշտ համարեցի հոգաբարձութեան գնել ալ նոր տոմար մը, զոր երեք մասերու բաժնելով սկսայ արձանագրել անցնող տարուան մկրտութիւններն ու պակները, ինչպէս նաեւ նախորդ հոսիւն յանձնուած կտրոններու վցայ երեւցող արձանագրութիւնները: Այս տոմարը պէտք է լիակատար դառնայ, եւ իր մէջ պարունակէ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ Հաստատութենէն ապրիլ կատարուած բոլոր ծիսակատարութիւններու արձանագրութիւնը: Ատոր համար անհրաժեշտ է որ յանձնախումբ մը որ զգնէ հովիտին, ոչ միայն կարգաւոր համար տրցակ մը դժուարեցնենք եւ խառնախմբ կտրոններ, հասա նաեւ պրպտութեան վրացնելու անցեալի շատ մը ծիսակատարութիւններու վերաբերեալ տեղեկութիւնները: Այլէն չափէն կը լսեմ. "Տէր շայր, մենք այսինչ թուականին ամսաւանցանք, սակայն եկեղեցիէն մեզի վկայագիր չարուեցաւ": Կամ, "Տէր Հայր, թուական այսինչ թուականին մկրտեցինք, սակայն վկայագիր չունեցանք եկեղեցիէն:" Երբ մանաւանդ ծիսակատարութիւնները կորսուած երբեմն այցելու հոգեւորականներու միջոցաւ, հոգաբարձութեան պարտականութիւնն է ոչ թէ միայն դրամական նուէրը գանձելու մասին հոգածու ըլլալ: Հասա նաեւ տոմարին համար պէտք եղած արձանագրութիւնները առնել, եթէ հոգեւորականը այդ ընելու պատեհութիւնը չէ ունեցած:

Ծիսակատարութեանց տոմարներու պակասէն դատ, կարելոք պակաս մըն էր նաեւ համայնքիս ընտանիքներու հասցէներու կանոնաւոր եւ վստահելի ցուցակի մը չգոյութիւնը: Այս, հոգաբարձութեան մօտ կար խառնխուռն, հիւսցած եւ անորամարտական ցանկ մը: Եթէ այսօր տակաւին դործածութեան մէջ ըլլաք այդ ցանկը, ինչի վաւա եւ Ռեւիւզիւն քննող անհատներ, զոր օրինակ, սակաւին էրք ֆէթըրընցի արձանագրուած պիսի մասին: Ուրախ եմ յայտարարելու որ եկեղեցւոյս Երիտասարդաց կազմակերպութիւնը, իրենց առեւտրաւ լեւոն Գազալեանի ժողովան ձեռնբրէցութեամբ, զգալով նոր եւ վստահելի ցուցակի մը անհրաժեշտութիւնը, միտաւար լծուեցան հեռաձայնի գրքէն հայերէն անուները զտելու, եւ դասաւորելու գործին, ու այդպէսով կարելիութիւն տուին ինչ պատրաստելու ֆրսէյք եւ Պրըկըն գաւաթիներու իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի հայոց այրաւքնական ցուցակը: Այս ցուցակը այժմ քարտերու վրայ մեքենագրուած է երէցկան Վաղմէ, ու հեռահեռի կ, աճի շարունակ նորագուէնով եթէ հասցէի փոփոխութիւն մը ըլլայ: Աւելի խոշոր քարտերու վրայ առանձին կը մեքենագրուին անուները այս ընտանիքներու, որոնց այցելած եմ: Յար, ֆէթըրընցի Հաստատուելէս ի վեր այցելած եմ 91-ին ստույն մէկընտանիքներու: Ենթահակութեամբ կը յիշեմ որ զիս ընտանիքներու ճանթացնելու տեսակէտէն օգտակար եղած են Տէր եւ Տիկին Ալեք Վրձանէսեան, Զաւէն Մարութեան, Նազաշեան Ընտանիք, Թուխման Գազալեան, եւ Մովսէս Խաչիկեան: Այս այցելութեանց քարտերու հիման վրայ, 21 տարեկան կամ աւելի եղող անհատներէն ամէն մէկուն համար առանձին քարտ պատրաստուած է: Այս երրորդ խումբը քարտերու մեր եկեղեցւոյ ապագայ անդամներու եւ պաշտօնեաներու հանցան է կերպով մը, անշուշտ աշխատող մտքերու եւ սրտերու կարօտ, եւ հանքը սեւէ արդիւնք պիտի տայ:

Գրտեանեակային այս հիմնական աշխատանքներու թուուսը վերջացնելու համար, կ'ուզեմ յիշել թղթած քարտերու -ծայլ-երու գրութիւնը, որ նմանապէս նորութիւն մըն է Ս. Ղեւոնդեանց եկեղեցւոյ գոյութեան մէջ: Անցեալին ստացուած պաշտօնական նամակներ, տպագրուած յայտարարութիւններ գտածս խառնուած իրարու, եւ յաւաքարտէ խարխուէ տուիի մը մէջ փոշիներու տակ թափուած: Այս թուղթերը հոգաբարձութեանէն ստանալէ ետք աչքէ անցուցի եւ գաւառներէն գաւառ ծայլերու մէջ: Ուրախ եմ որ Տեարք Սեդրակ Աճեմեան, Ալեք Վրձանէսեան, եւ Ճան Պրժեան իրենց քով գտնուող կարգ մը թուղթեր ալ յանձնեցին այս թղթած քարտերը ամբողջացնելու համար: Տեղն է յիշեցնել բոլորիդ թէ եկեղեցւոյ անուով ստացուած պաշտօնական գրութիւնները կը դառնան սեփականութիւնը եկեղեցիին եւ ոչ թէ անհատներու, որով այդ կարգի թուղթեր տակաւին իրենց քով պահողներ հաճին գանձել յանձնել ինչ, իրենց յատուկ տեղը գրուելու համար:

Սեպտեմբերին ի վեր եկեղեցիս սկսած է հրատարակել իր ամսական թերթիկը, չուս էլ, ԼՐԱՏՈՒ անունով: Թերթիկէն երեք հարիւր օրինակի չափ կը դրուուի մեր ծախի ծանօթ բաւար Հայ Ընտանիքներուն, նիւ ճր, զի մէջ ցրուած մեր եկեղեցւոյ բարեկամներուն, ինչպէս նաեւ մեր թեմի հոգեւորականներուն, եւ կարգ մը նիւ ետրոսներու: Սկզբունք ըրած եմ անէն թիւի մէջ հրատարակել նկար մը, մեր եկեղեցւոյ կեանքէն կամ գործունէութենէն տեսարանով մը: Վերջերս այս լուսանկարներու հայթայթումը յօտարակամ կ'ընէ մեր հոգաբարձուներէն Տիար Զարիի Հալոսիկեան, իսկ քրթեքը սիրայօժար կը պատրաստէ Փրսէյթ Ծօթօ Էնկոբէյվիսկ Ընկերութիւնը, բարեհաճ գործակցութեամբ Տիար Հայկ Կէմէրէրեանի: Եկեղեցւոյ տպագրական գործերը Ապրիլ ամիսէն սկսեալ վստահած ենք դիւրամա- չելի պայմաններով նիւ ետրոսի "Կոչակ" Ծպարանին: Վերջերս մեծապէս դիւրա- ցած է Հովիւին եւ տպարանին հաղորդակցութիւնը շնորհիւ գործակցութեանը Տիար Զան Պազազեանի, որ նիւ ետրոսի մէջ իր գործին բերումով կ'ըրած է թղթատարի պաշտօն կատարել երկուստեք: Կ'արժէ յիշել որ մեր խոստամտւից կ'սխալաբան- րէն քիմի Գօյնէան իբրեւ թղթակից փէթըրքըն իվնիսկ նիւզ օրաթերթին, զանա- զան առիթներով եկեղեցւոյս ձեռնարկներուն մասին անգլիերէն գրութիւններ զե- տեղած է այդ թերթին մէջ: Ամէն ամիս, ԼՐԱՏՈՒ-ի հասցէները կը մերենագրէ երէցկիւնը, իսկ Տիար Ալեք Լոսիլէսկան, հոգաբարձուէ, յանձն առած է բաժնեկի- րու գաւառուէր Կեանք մէջ եւ արձեւմանգ Ելի:

Բնական տարիներէ ի վեր դադարած Հայկական դպրոցը նորակազմ խնամակալութեան մը շնորհերով վերաբարձնք անցեալ Հոկտեմբերին, 15 աշակերտ- ներով: Աշակերտներէն 9 փոքրերը Հայերէն այբուբէնը կ'ուսանին թոշակաւոր օրիորդէ մը: Իսկ երէց վեց աշակերտներ իմ անմիջական հսկողութեան տակ են: Խնամակալութեան ատենագիրք Տիկին Հէլըն Մարտիրոսեան քանիցս փոխանորդաբար դասաւանդութիւն ըրած է մեծերուն: Բնական է որ աշակերտները մեծ փափքով չեն գար դպրոց: Ծնողք պէտք է քաջալերեն ու յորդորեն փոքրիկները Հայկական դպրոց կանոնաւոր յաճախելու, ուշադիր լինին տունը Հայերէն խօսելու անոնց հետ, եւ մօտէն հետաքրքրուին անոնց դասերով:

Հայկական դպրոցին չափ եւ անկի կարեւոր է անշուշտ Կիրակ- նօրեայ վարժարանը, որ փոքրիկները ոչ միայն կը սորվին քրիստոնէական կրօնի նախասարրերը, հապ նաեւ կը վարժուին Հայ եկեղեցի յանձնելու եւ զայն սիրելու, իրենց մատաղ տարիքին մէջ: Քաջալերական երկույթ մըն է աշա- կերտութեան թիւին անկը. ասոր փաստն այն է որ ուսուցիչները, որոնք միայն երկու էին անցեալ Մարտին, այժմ վեց հաս են. չորս մնայուն եւ երկու օգնա- կան: Կիրակնօրեայ դպրոց չկար մեր տարիքատներու ծննդավայրին մէջ, սակայն Ամերիկայի մէջ ասիկա անհրաժեշտութիւն է: Կիրակնօրեայ դպրոցը լաւ արդիւնք տալու համար պէտք է շինայել անկէ դասադրքերու եւ ուսուցանութեան ուրիշ միջոցներու ծախքը: Նաեւ չափազանց կարեւոր է որ ծնողք կանուխ բերեն զանա- կաները Կիրակնօրեայ դպրոց, եւ կառք ունեցողները օգնեն շունեցող Ընտանիքներուն, պզտիկներու փոխադրութեան համար:

Նկատի ունենալով որ եկեղեցին շունի մնայուն տնտես կամ ժամ- կոչ, Ս. Խորանի մաքրութեան եւ բարեզարդման համար վերջերս որոշեցինք ունե- նալ յանձնարումք մը, որ ամսէ ամիս հոգ տանի Ս. Խորանի առարկաներու մաքրու- թեան եւ յարգարանին: Ուրախ ենք որ շնորհիւ երկու բարեպաշտ սիկիւններու, Արշալոյս Գալէմբեալեան, նիւ ետրոսէն, եւ Հայկանոյ Տապազեան, Ծուներն Սիթիէն, այժմ մեր մկրտութեան աւագանք եւ Ս. Խորանի երկու վարժերը ունին իրենց վայելուչ վարագոյրները: Ձեռք է յիշեցնեմ բոլորիդ թէ մեծ հաճոք կը մօտենայ, աւ անհրաժեշտ է որ Ս. Խորանը այդ շքանին ունենայ սեւ վարագոյր մը: Կամա- տը նուիրատուութեամբ մայր Խնդիրը կը լուծուի, կը յուսամ:

Տիկնանց Միութեան գործունէութիւնը բախորդ ծանօթ է: Կը ցաւիմ որ քիչ անգամ կարելիութիւն ունեցած եմ նախագահելու իրենց ժողովներուն, քանի որ թէ հոգաբարձութեան եւ թէ Տիկնանց Միութեան ժողովները շարժուած միեւնոյն օրը գումարուած են անցեալ տարեշրջանին: Գնահատելի է Տիկնանց Միու- թեան ատենապետ Տիկին մէրի Լոքանէսեանի շինիչ ոգին եւ իմաստուն ղեկավարու- թիւնը: Ձեռք է կարեւորութեամբ շեշտեմ թէ Տիկնանց Միութիւնը հոգաբարձութեան

հաւասարակից մարմին մը չէ, այլ ենթակայ է անոր: Եկեղեցւոյ մը ընդհանուր գործունէութեան վարիչն է Հոգաբարձութիւնը, Հովիւի մը ընդհանրապէս Հոգաբարձութեան մարմինները օժանդակ եւ Համարատու են, պատասխանատու են Հովիւին եւ Հոգաբարձութեան: Պարտականութեանց եւ իրաւունքներու յստակ ըմբռնում ունենալու համար պէտք է կարեւորութիւն տալ կանոնադրներու, որոնց մէջ սկզբունքներով է որ պէտք է ղեկավարուին:

Եկեղեցւոյ մը կեանքին մէջ կարգ ու կանոնի հսկիչ եւ գործադրիչ վերին մարմինը Հոգաբարձութիւնն է: Հոգաբարձութեան մը արդիւնատու գործ տեսնելու համար, քիչ թէ շատ տեղեակ պէտք է ըլլայ իր պարտականութեանց եւ իրաւունքներուն, որոնց յստակ կերպով գծում են մեր թեմի կանոնադրութեան մէջ: Մանաւանդ Հոգաբարձութեան անձնակազմին, ատենադիրին եւ զանազան կ'ակնկալուի իրենց վստահուած պարտականութեանց բնոյթի մասին զահարուցիլ անօթութիւն մը:

Հոգաբարձու մը, բարին բուն առումով, իր կանակին վրայ եկեղեցիին հոգեբարձութեան վերջնական անձ մը պէտք է ըլլայ: Եւ չկարծենք թէ ասիկա դիւրին գործ է, կատակ է: Չկարծենք նաեւ որ անգամ մը որ Հոգաբարձու ընտրուեցանց, այլեւս կ'ըլլան կ'ըլլանք աշխարհի ամբողջ գիտութիւնը եւ բան սորվելու պէտք չունինք: Մանաւանդ Ամերիկայի նման կենսունակ երկրի մը մէջ ուր կ'ապրինք հիմա, բան սորվելու կարելիութիւնը սահման չունի: Պէտք է բան սորվինք, քայլ պահելու համար յառաջդիմութեանց հետ, որ ուրիշ եկեղեցիներ եւ կազմակերպութիւններ կ'իրազօրեն: Եթէ զոցենք մեր մտքին ու սրտին աչքերը գիտումնաւոր կերպով, ու որոշենք կողմնաւ մեր պատեանքին մէջ, մերժել նոր դէմքերու եւ նոր զաղափարներու մուտքը մեր սովորական գործելակերպերուն մէջ, մեր եկեղեցական կեանքը պիտի քարանայ ու օր մըն ալ դադար պիտի առնէ:

Պէտք է վերջ տանք կողմնացումի հիւանդադին վիճակին: Գիտնանք որ եկեղեցիին դռնը բաց պէտք է պահենք ներս մտնել փափաքող բոլոր Հայ ընտանիքներուն առջեւ: Պէտք է գիտնանք նաեւ որ մեր եկեղեցին միս մինակը բան մը չարժենք, անկիւ մէկ փոքր ճիւղն է Ամերիկահայոց Առաջնորդական թեմին, որուն կեդրոնական վարչութեան ու անոր նախագահ Առաջնորդ Սրբազան Հօր ու փոխանորդին հանդէպ ունինք բարոյական եւ նիւթական պարտաւորութիւններ: Եթէ մեր կեդրոնին հանդէպ մեր կատարելիք պարտականութիւնները անհաճոյ կը թուին մեզի ու արտունջով եւ չկամութեամբ պիտի կատարենք զանոնք, այլեւս ինչ հարկ կայ երեսփոխան ընտրելու մեր եկեղեցիէն: Ճիւղ մը սնունդ չկրնար ստանալ եւ շահիր եթէ մերժէ արմատէն իրեն զաւիթ սնունդը:

Կ'աղօթեմ որ Աստուած իմաստութիւն տայ բոլորիս, բանայ մեր մտքերուն հոգեզոնն ու սրտերուն պատուհանները, որպէսզի յառաջիկայ տարուան դժուար պատասխանատուութիւնները դիմաւորենք հաւատքով, քաջութեամբ, Աստուծոյ վստով, եւ ծառայելու ֆանկեղծ սիրով, ամէն:

20 Յունուար 1952
Փէթրըսըն

Հովիւ
Արտէն ԲՏՆՅ. Աշեան

28 July 1952

Upton, N.Y.

Upton, N.Y. 11973

My dear Mr. [unclear] I am writing to you to tell you that I have been thinking about you a great deal lately and I hope you are well. I am well at present and hope these few lines will find you the same. I am sure you are busy with your work but I thought I would write you a few lines to let you know I am still thinking of you.

My dear Mr. [unclear]

I am writing you to tell you that I am well and hope you are the same. I am sure you are busy with your work but I thought I would write you a few lines to let you know I am still thinking of you.

I am writing you to tell you that I am well and hope you are the same. I am sure you are busy with your work but I thought I would write you a few lines to let you know I am still thinking of you.

I am writing you to tell you that I am well and hope you are the same. I am sure you are busy with your work but I thought I would write you a few lines to let you know I am still thinking of you.

... of the ... of ...
... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...

Chase

... of ... of ...
... of ... of ...
... of ... of ...